ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«26» նոյեմբերի 2020 թվական N 18

## *ԱՎԱԳԱՆՈՒ N 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

**Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածով՝**

**Ավագանին որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից ։

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
| --- | --- | --- |
| 1. Բեգլարյան Ջիվան | ------------- | ------------- |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------- | ------------- |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------- | ------------- |

ան Ալի

5. Շահնազարյան Հակոբ

6. Սիմոնյան Սարգիս

7.Արմենակյան Շավարշ

8. Ստեփանյան Վարդուհի

9. Բաղդասարյան Կարինե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 -Ի ԹԻՎ 7
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

18. ՀԱՍՏԱՏԵԼ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ :

*Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան*

19-Ն. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

*20-Ն . ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

21.ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

22. ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ , ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

*24.* ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ *ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

*25. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

*26-Ն.* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ *ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Էլիզա Մարկոսյան

27-Ա. ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0059-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԹԻՎ 3 ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«26» նոյեմբերի 2020 թվական N 19 -Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ Ա Ր Ե Վ Ի Կ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, 12-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի մարզի Արևիկ
համայնքի ավագանու
2020 թվականի նոյեմբերի 26 -ի
N 19 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**1. Համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.**

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ,**

բ. սույն կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ,**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ,**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հարյուր հազար դրամ.**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ,**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար դրամ.**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար դրամ,**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի ,ա» ենթակետով սահմանված

րույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **մեկ հարյուր հիսուն հազար դրամ.**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի , ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար:

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մինչև երկու հազար դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնմեկ հազար դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ,**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսաներեք հազար դրամ,**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեսուն հազար դրամ,**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **հիսուն հազար դրամ.**

բ. ծխախոտի արտադրանքի ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երկու հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնմեկ հազար դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսաներեք հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեսուն հազար դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ՝ **հիսուն հազար դրամ**

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,,Առևտրի և ծառայությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն դրամ**՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **քսան հազար դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **երեսուն հազար դրամ,**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հիսուն դրամ,**

դ. խաղատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ,**

ե. շահումով խաղերի համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ,**

**զ. վիճակախաղերի համար՝** հարյուր հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հազար դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասներեք հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնյոթ հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսանհինգ հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեսունհինգ հազար դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հարյուր դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար երկու հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասը հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնյոթ հազար դրամ.**

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար դրամ,**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**

գ. սոցիալական գովազդի համար՝ **զրո դրամ,**

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**

ե. ղատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար **երեք հարյուր յոթանասունհինգ դրամ,**

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար **հարյուր հիսուն դրամ.**

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **մեկ հարյուր հազար դրամ.**

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **տասը հազար դրամ.**

**2. Համայքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.**

1)Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **հինգ հազար դրամ.**

2)Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **հինգ հազար դրամ.**

3)Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝

համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **հինգ հազար դրամ.**

4)Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **մեկ հազար դրամ.**

5)Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության h-ամար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **հինգ հազար դրամ.**

6)Համայնքի կողմից աղբահանության վճար սահմանել համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող կամ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **հիսուն դրամ.**

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

ա)Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ- **հիսուն դրամ** մեկ քառակուսի մետրի համար

բ)հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ- **քսան դրամ** մեկ քառակուսի մետրի համար

գ) արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ - **հինգ դրամ** մեկ քառակուսի մետրի համար

դ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ - **երեք դրամ** մեկ քառակուսի մետրի համար

9) Համայնքի տարածքում համայնքի կողմից խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման դիմաց փոխհատուցման գումար սահմանել՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **հիսուն դրամ:**

10) ոռոգման համար սահմանել վճար՝ 1 ժամը **երկու հազար դրամ:**

11)Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական դպրոց, նկարչական խմբակ և այլն) ծառայություններից օգտվողների համար սահմանել.

-երաժշտական դպրոց հաճախող երեխաների համար ծնողական վճար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ: Կիրառել զեղչ՝

ա/մեկ ընտանիքից երաժշտական դպրոց հաճախող երկու և ավելի երեխաների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ՝ յուրաքանչյուրից

բ/միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ երկու հազար դրամ `յուրաքանչյուրից

գ/երկկողմանի ծնողազուրկ երեխաների, ինչպես նաև զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, առաջին կարգի հաշմանդամ ների երեխաների համար կիրառել 100% զեղչ:

-նկարչական խմբակ հաճախող երեխաների համար ծնողական վճար՝ երկու հազար դրամ:

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | ________ | ________ |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ________ | ________ |
| 3. Գրիգորյան Գագիկ | ________ | ________ |
| 4. Ալոյան Ալի | ________ | ________ |
| 5.Շահնազարյան Հակոբ | ________ | ________ |
| 6. Սիմոնյան Սարգիս | ________ | ________ |
| 7.Արմենակյան Շավարշ | ________ | ________ |
| 8. Ստեփանյան Վարդուհի | ________ | ________ |
| 9. Բաղդասարյան Կարինե | ________ | ________ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ **ԱՐԵՎԻԿ** ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ **ԱՐԵՎԻԿ** ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2020 ԹՎԱԿԱՆԻ **«նոյեմբերի»** «26» -ի N 19 -Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին » 2020 թ վ ա կ ա ն ի «նոյեմբերի» «26»-ի N 19 -Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով, և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է ապահովելու համայնքի կողմից մատուցվող ծառայությունների վճարների հավասար մատչելիությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

## «26» նոյեմբերի 2020 թվական N 20 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ *ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 -Ի
N 20 - Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող, ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.

3) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.

4) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.

5) համայնքի բնակիչ համարվող անձանց տեղեկանք, բնութագիր և երաշխավորագիր տալու համար՝ մեկ հազար դրամ:

2. Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց՝ մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց կողմից վաճառված բերքի համար տրամադրվող տեղեկանքի դիմաց՝ մեկ հազար դրամ:

2) համայնքի բնակիչ համարվող անձանց տեղեկանք տալու համար՝ երկու հարյուր դրամ.

3. ոռոգման համար սահմանել 1 ժամը երկու հազար դրամ:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ |
|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | ________ | ________ |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ________ | ________ |

3. Գրիգորյան Գագիկ ------------ ------------

4. Ալոյան Ալի ------------ ------------

5.Շահնազարյան Հակոբ ------------ ------------

6. Սիմոնյան Սարգիս ------------ ------------

7.Արմենակյան Շավարշ ------------ ------------

8. Ստեփանյան Վարդուհի ------------ ------------

9. Բաղդասարյան Կարինե ------------ ------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 –Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 20- Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 26 -ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 20 -Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է ապահովելու համայնքի կողմից մատուցվող ծառայությունների վճարների հավասար մատչելիությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

## «26» նոյեմբերի 2020 թվական N 21

## ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով, 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արցախի Հանրապետության մարտական գործողություններին մասնակցած , հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի բնակիչ հանդիսացող զինծառայողի ընտանիքներին հատկացնել միանվագ դրամական աջակցություն՝ յուրաքանչյուրին 200 000 (երկու հարյուր հազար ) ՀՀ դրամ, անհետ կորած համարվող զինծառայողի ընտանիքին՝ **100 000** (մեկ հարյուր հազար **)** ՀՀ **դրամ** իսկ վիրավորում ստացած զինծառայողներին՝ **50 000** (հիսուն հազար **)** ՀՀ **դրամ :**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | ------------- | ------------- |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------- | ------------- |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------- | ------------- |

4. Ալոյան Ալի -------------- --------------

5.Շահնազարյան Հակոբ -------------- --------------

6. Սիմոնյան Սարգիս -------------- --------------

7.Արմենակյան Շավարշ -------------- --------------

8. Ստեփանյան Վարդուհի -------------- --------------

9. Բաղդասարյան Կարինե -------------- --------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«26» նոյեմբերի 2020 թվական N 22**

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ , ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, հիմք ընդունելով «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների և <<Արևիկի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 , N2, N3 հավելվածների:

2.Սույն որոշմամբ սահմանված հաշվարկները կիրառել 2021 թվականի հունվարի 1-ից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | ------------- | ------------- |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------- | ------------- |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------- | ------------- |

4. Ալոյան Ալի ------------- -------------

5.Շահնազարյան Հակոբ ------------- -------------

6. Սիմոնյան Սարգիս ------------- -------------

7.Արմենակյան Շավարշ ------------- -------------

8. Ստեփանյան Վարդուհի ------------- -------------

9. Բաղդասարյան Կարինե ------------- -------------

Համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան

2020 թվական նոյեմբերի 26

Գ.Արնիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N22 ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ--9
2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ՝

| Հ/Հ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ | ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ |
|---|---|---|---|
| 1 | 1 | Համայնքի ղեկավար | 290000 |
| 2 | 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 190000 |
| | | Աշխատակազմ | |
| 3 | 1 | Աշխատակազմի քարտուղար | 230000 |
| 4 | 3 | առաջատար մասնագետ | 230000 |
| 5 | 2 | Առաջին կարգի մասնագետ | 170000 |
| | | Տեխնիկական սպասարկող անձնակզմ | - |
| 6 | 1 | հավաքարար | 92700 |
| | | | |
| | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ N2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 -Ի N22 ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ--4

2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ՝

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ |
|---|---|---|---|
| 1 | Մշակույթի տան տնօրեն | 1 | 92700 |
| 2 | Գրադարանի վարիչ | 1 | 92700 |
| 3 | Գերեզմանատան պահակ | 1 | 92700 |
| 4 | Նկարչության դասատու | 1 | 92700 |
| | | | |
| | | | |
| | | | |

*ՀԱՎԵԼՎԱԾ N3*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ*
*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*
*2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 -Ի N22 ՈՐՈՇՄԱՆ*

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԵՎԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

*1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ--7*

*2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ՝*

| *Հ/Հ* | *ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ* | *ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ* | *ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ* |
|---|---|---|---|
| 1 | 1 | Տնօրեն | 115 000 |
| 2 | 1 | Հաշվապահ | 115 000 |
| 3 | 2 | Դաշնամուրի դասատու | 98 000 |
| 4 | 1 | Քանոնի դասատու | 93 000 |
| 5 | 1 | Դուդուկի դասատու | 93 000 |
| 6 | 1 | Ոկալի դասատու | 98 000 |
| | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

## «26» նոյեմբերի 2020 թվական N 23

### ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՒԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ղեկավարի վարձատրությունը սահմանել **290000** (երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ
2. Սույն որոշմամբ սահմանված հաշվարկները կիրառել 2021 թվականի հունվարի 1-ից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նույն օրը:

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | ------------ | ------------ |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------ | ------------ |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------ | ------------ |
| 4. Ալոյան Ալի | ------------ | ------------ |

5.Շահնազարյան Հակոբ ______________ ______________

6. Սիմոնյան Սարգիս ______________ ______________

7.Արմենակյան Շավարշ ______________ ______________

8. Ստեփանյան Վարդուհի ______________ ______________

9. Բաղդասարյան Կարինե ______________ ______________

Համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան

2020 թվական նոյեմբերի 26

Գ.Արենիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«26» նոյեմբերի 2020 թվական N 24**

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների համար համայնքում ձևակերպել հետևյալ հաստիքները՝

1) **Ջրամատակարարման, աղբահանության, գազի կաթսայի շահագործման և անխափան աշխատանքն ապահովելու, այգեպանի, էլեկտրիկի և անասնաբույժի ծառայությունների իրականացման համար համայնքում ձևակերպել հետևյալ հաստիքները՝**
   1. Խմելաջրի ջրամատակարումն ապահովելու համար պատասխանատու՝ 1 միավոր 120000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:
   2. Աղբահանություն կատարելու՝ աղբը տեղափոխելու համար տրակտորիստ՝ 1 միավոր 89700 (ութսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Աշխատանքները կատարվելու են աշխատողի սեփական տրակտորով:
   3. Գազի կաթսայի շահագործման և անխափան աշխատանքն ապահովելու համար ՝ 1 միավոր՝ 89700 (ութսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Աշխատանքի տևողությունը նոյեմբերի 15-ից մարտի 31-ը:
   4. Այգեպանի պարտականությունները կատարելու համար ՝ 1 միավոր 89700 (ութսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Աշխատանքի տևողությունը մարտի 1- ից նոյեմբերի 30-ը:
   5. Էլեկտրիկի ծառայությունները մատուցելու համար ՝ 0.5 միավոր՝ 55000 (հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:
   6. Անասնաբույժի ծառայությունները մատուցելու համար ՝ 0.5 միավոր՝ 47000 ( քառասունյոթ հազար ) ՀՀ դրամ:

2) Սույն որոշմամբ սահմանված հաշվարկները կիրառել 2020 թվականի հունվարի 1-ից:
3) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
|---|---|---|
| 1. Բեգլարյան Զիվան | [signature] | ------------- |
| 2.Ղարիբյան Ղուկաս | [signature] | ------------- |

3. Գրիգորյան Գագիկ ------------ ------------

4. Ալոյան Ալի ------------ ------------

5.Շահնազարյան Հակոբ ------------ ------------

6. Սիմոնյան Սարգիս ------------ ------------

7.Արմենակյան Շավարշ ------------ ------------

8. Ստեփանյան Վարդուհի ------------ ------------

9. Բաղդասարյան Կարինե ------------ ------------

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

2020 թվական նոյեմբերի 26

Գ.Արենիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

## «26» նոյեմբերի 2020 թվական N 25

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, նաև հաշվի առնելով Արևիկ համայնքի և սոցիալական օգնության տրամադրման համար ստեղծված հանձնաժողովի 2020 թվականի N 3 եզրակացությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | ------------- | ------------- |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------- | ------------- |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------- | ------------- |

4. Ալոյան Ալի ______________ ______________

5.Շահնազարյան Հակոբ ______________ ______________

6. Սիմոնյան Սարգիս ______________ ______________

7.Արմենակյան Շավարշ ______________ ______________

8. Ստեփանյան Վարդուհի ______________ ______________

9. Բաղդասարյան Կարինե ______________ ______________

Համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան

2020 թվական նոյեմբերի 26

Գ.Արևիկ

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ*
*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*
*2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 -Ի*
*N 25 ՈՐՈՇՄԱՆ*

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿ

| N | Անուն Ազգանուն | Անձնագիր | ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1. | Լիաննա Աղաբեկյան | AR 0477150 | 50,000 |
| 2. | Անուշ Եղիազարյանին | AU0406029 | 50,000 |

Համայնքի ղեկավար` Գ. Ծատուրյան

2020 թվական նոյեմբերի 26
Գ.Արևիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» Նոյեմբերի 2020 թվականի N 27-Ա

### ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0059-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԹԻՎ 3 ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 65-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, 605-րդ հոդվածքվ և հիմք ընդունելով <<Արևիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Ավագյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### Ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքում գտնվող 0059-0006 ծածկագրով թիվ 3 օժանդակ շինությունը (31.6 ք/մ) անհատույց տրամադրել Արևիկի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | ------------ | ------------ |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------ | ------------ |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------ | ------------ |
| 4. Ալոյան Ալի | ------------ | ------------ |
| 5.Շահնազարյան Հակոբ | ------------ | ------------ |
| 6. Սիմոնյան Սարգիս | ------------ | ------------ |

7.Արմենակյան Շավարշ ---------------- ----------------

8. Ստեփանյան Վարդուհի ---------------- ----------------

9. Բաղդասարյան Կարինե ---------------- ----------------

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

2020 թվական նոյեմբերի 26

Գ.Արևիկ

Հավելված 1
[illegible] 20.10.2011 թ. N 284-Ն [illegible]

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում եմ
______ (ղեկավարի ստորագրություն)
«___» ______ 20__ թ.

Հայաստանի Հանրապետություն
(Անուն, ազգանուն, հայրանուն կամ կազմակերպության անվանումը)

(Հողհատկացման կամ ձեռքբերման հիմքը)

| ԱՐՄԱՎԻՐ | գ. Արևիկ | 20-րդ փողոց, 4 շենք |
|---|---|---|
| (մարզ) | (համայնք) | (հասցեն) |

Մասշտաբ 1:1000




| ՀՈՂԱՄԱՍԻ | | | | | | | ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մակերեսը (հա) | 1.38 | Բեկման կետեր | X | Y | Չափը /մ/ | [illegible] | [illegible] | Գործառնական նշանակությունը (անվանումը) | Բեկման կետեր | X | Y | Չափը /մ/ |
| | | | | | | | 3 | [illegible] | | | | |
| Ծածկագիր | 0059-0006 | | | | | | | | | | | |
| Նպատակային նշանակությունը | բնակավայրի | | | | | | | | | | | |
| Գործառնական նշանակությունը | հասարակական կառուցապատման | | | | | | | | | | | |
| Հողամասը ծանրաբեռնված է | շենք, շինություն | | | | | | | | | | | |

Կատարող ______ Արման Գևորգյան
(անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը № 0241 տրման ամիս, ամսաթիվ 29.10.2012 թ.

Կատարման ամսաթիվը 07.10.2020 թ.

Լիցենզավորված անձ 65.738718 ԱՁ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
(անուն, ազգանուն)

| Հողամաս | | | |
|---|---|---|---|
| Բեկման կետեր | X | Y | Չափը /մ/ |
| 1 | 4440885.99 | 8422746.41 | 85.20 |
| 2 | 4440961.42 | 8422786.02 | 24.00 |
| 3 | 4440954.79 | 8422809.09 | 37.00 |
| 4 | 4440979.77 | 8422836.38 | 67.10 |
| 5 | 4440940.47 | 8422890.76 | 112.20 |
| 6 | 4440837.72 | 8422845.70 | 33.40 |
| 7 | 4440828.50 | 8422813.60 | 6.00 |
| 8 | 4440832.48 | 8422809.11 | 22.50 |
| 9 | 4440817.62 | 8422792.22 | 44.50 |
| 10 | 4440854.68 | 8422767.59 | 6.80 |
| 11 | 4440860.34 | 8422763.82 | 7.55 |
| 12 | 4440866.61 | 8422759.62 | 23.45 |
| 1 | 4440885.99 | 8422746.41 | |

| 5 | | | |
|---|---|---|---|
| Բեկման կետեր | X | Y | Չափը /մ/ |
| 1 | 4440958.89 | 8422825.30 | 4.40 |
| 2 | 4440962.83 | 8422827.26 | 8.30 |
| 3 | 4440959.13 | 8422834.69 | 4.40 |
| 4 | 4440955.19 | 8422832.73 | 8.30 |
| 1 | 4440958.89 | 8422825.30 | |

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետություն

Անուն, ազգանուն /անվանումը/

Մարզ Արմավիր համայնք գ. Արևիկ Հասցե 20 փողոց, 4 շենք

3 Օժանդակ շինություն




1-ին հարկ
H=2.00
D=0.20

| Հողամաս | | | |
|---|---|---|---|
| Բեկման կետեր | X | Y | Չափը /մ/ |
| 1 | 4440885.99 | 8422746.41 | 85.20 |
| 2 | 4440961.42 | 8422786.02 | 24.00 |
| 3 | 4440954.79 | 8422809.09 | 37.00 |
| 4 | 4440979.77 | 8422836.38 | 67.10 |
| 5 | 4440940.47 | 8422890.76 | 112.20 |
| 6 | 4440837.72 | 8422845.70 | 33.40 |
| 7 | 4440828.50 | 8422813.60 | 6.00 |
| 8 | 4440832.48 | 8422809.11 | 22.50 |
| 9 | 4440817.62 | 8422792.22 | 44.50 |
| 10 | 4440854.68 | 8422767.59 | 6.80 |
| 11 | 4440850.34 | 8422763.82 | 7.55 |
| 12 | 4440866.61 | 8422759.62 | 23.45 |
| 1 | 4440885.99 | 8422746.41 | |

| 5 | | | |
|---|---|---|---|
| Բեկման կետեր | X | Y | Չափը /մ/ |
| 1 | 4440958.89 | 8422825.30 | 4.40 |
| 2 | 4440962.83 | 8422827.26 | 8.30 |
| 3 | 4440959.13 | 8422834.69 | 4.40 |
| 4 | 4440955.19 | 8422832.73 | 8.30 |
| 1 | 4440958.89 | 8422825.30 | |

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Հարկը | Հարկայնությունը | Մակերեսները /քմ/ | | Բարձրությունը /մ/ | Ծավալը /խմ/ | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութերի տեսակը | Մածկի նյութը | | Արտաքին հարդարումը ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կղմինդր | այլ նյութ | ավարտուն | մինչև 50 % | 50%-80% | 80% և ավել | | փայտ | երկաթբետոն | սվաղված | երեսպատված | ներկված | տաշված | առանց հարդարման |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | հասարակական | օժանդակ շինություն | 1 | 1 | 31.60 | | | | | | | | | V | | | | տուֆ | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Շինությունների ընդհանուր մակերեսը /քմ/ | Օրինական կառուցված | Ինքնակամ կառուցված |
|---|---|---|
| 27 | 28 | 29 |
| 31.60 | 31.60 | 0.00 |

Կատարող ____________ Ա. Գևորգյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը 0241 տրման ամիս, ամսաթիվ 29.10.2012 թ. Կատարման ամիս ամսաթիվ 07.10.2020 թ.

Իրավաբանական ա 65.738718 ԱՁ Արման Գևորգյան
(պետական գրանցման համարը) (անվանումը)

GEVORGYAN ARMAN

# Եզրակացություն

Տրվում է առ այն, որ ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 059-006 ծածկագրում գտնվող թիվ 3 օժանդակ շինության արտաքին մակերեսը կազմում է 36.52 քմ (ներքինը՝ 31.6 քմ): Պետական գրանցում ստացած թիվ 1 և 2 շինությունները չեն չափագրվել պատվիրատուի ցանկությամբ

Որակավորման վկայական թիվ № 0241 տրված 29.10.2012 թ.

07.10.2020 թ. ______________ Ա. Գևորգյան

(ստորագրություն)

Դիմող՝ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տրամադրված տեղեկատվությունը՝

30.09.2020թ.
տրման ամսաթիվը

| Հ/Հ | Մարզ | Համայնք | Ծածկագիր | Կադաստրային քարտեզ | | Շրջադարձային կետերի կոորդինատներ | | Գեոդեզիական կետերի կոորդինատներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) |
| 1 | Արմավիր | Արևիկ | 0059-0006 | 1 | 100 | | | | |

Վճարման ենթակա գումարի չափը կրկնավճարով՝ 200 դրամ

Տեղեկատվությունը տրամադրվում է Կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից:

Տեղեկատվությունը տրամադրվել է www.e-cadastre.am կայք էջից

GEVORGYAN
ARMAN

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

# ՎԿԱՅԱԿԱՆ N 0241

## ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի 26 հոկտեմբերի 2012թ. եզրակացությամբ՝ արձանագրություն N 2

տրվել է

## ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ՉԱՓԱԳՐՈՂԻ (ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ

Ե.ՋԱՆՍԱՐՅԱՆ

«29» հոկտեմբերի 2012թ.

ԱՐՄԱՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ
73527901
010 888718
GEVORGYAN
ARMAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«26» նոյեմբերի 2020 թվական N 26 -Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 34-րդ հոդվածով, « Հայաստանի Հանրապետության **բյուջետային** համակարգի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1646-Ն որոշումը`

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները .**

**1.Վարչական բյուջեի եկամտային մասում**

**ա. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)`1261 տողում 0.0 թիվը փոխարինել 9914.4 թվով , համապատասխանաբար վարչական բյուջեի ծախսային մասում**

**04 բաժին 03 խումբ 2 դասում 5113 հոդվածում 9726.8 թիվը փոխարինել 19641.2 թվով:**

**բ. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար ` 1111 տողում 230.0 թիվը փոխարինել 130.0 թվով:**

գ. Գույքահարկ փոխադրամիջոցների համար ՝ 1121 տողում 7800.0 թիվը փոխարինել 6800.0 թվով:

դ. Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար՝ 1112 տողում 5500.0 թիվը փոխարինել 3400.0 թվով:

ե. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար՝ 1137 տողում 484.0 թիվը փոխարինել 180.0 թվով:

գ. Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ՝ 1333 տողում 1121.6 թիվը փոխարինել 321.6 թվով:

Տեղական վճարներ՝ 1351 տողում 1300.0 թիվը փոխարինել 600.0 թվով:

2. Վարչական բյուջեի ծախսային մասում ՝

01 բաժին 1 խումբ 1 դասում 4111 հոդվածում 21850.0 թիվը փոխարինել 18950.0 թվով,
01 բաժին 1 խումբ 1 դասում 4212 հոդվածում 5500.0 թիվը փոխարինել 3500.0 թվով,
01 բաժին 6 խումբ 1 դասում 4111 հոդվածում 3600.0 թիվը փոխարինել 2900.0 թվով,
01 բաժին 1 խումբ 1 դասում 4252 հոդվածում 400.0 թիվը փոխարինել 576.0 թվով,
01 բաժին 1 խումբ 1 դասում 4264 հոդվածում 300.0 թիվը փոխարինել 720.0 թվով,

**3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:**

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ |
| --- | --- | --- |
| 1. Բեգլարյան Ջիվան | ------------- | ------------- |
| 2. Ղարիբյան Ղուկաս | ------------- | ------------- |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------- | ------------- |
| 4. Ալոյան Ալի | ------------- | ------------- |
| 5. Շահնազարյան Հակոբ | ------------- | ------------- |
| 6. Սիմոնյան Սարգիս | ------------- | ------------- |
| 7. Արմենակյան Շավարշ | ------------- | ------------- |
| 8. Ստեփանյան Վարդուհի | ------------- | ------------- |
| 9. Բաղդասարյան Կարինե | ------------- | ------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

№ ____________
« » ____________ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՊԱՐՈՆ Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 210 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

11/25/2020

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Հեռ. (010) 594-116

Արդարադատության
Նախարարություն

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ**

1. **«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին»** ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ նախագծի անվանման մեջ նշել «ՈՐՈՇՈՒՄ» բառը:

2. Նախագծի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետի 2-րդ ենթակետի գ/ պարբերությունում «հոդվածի 1-ին մասի 1-ին կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կետի 1-ին ենթակետով» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

3. Հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները, որոնց համաձայն ծխախոտային արտադրատեսակներից բացի տեղական տուրք է սահմանվում նաև **ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության** համար:

4. Հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի գ/ պարբերությամբ նախատեսված տեղական տուրքի դրույքաչափն անհրաժեշտ է համապասխանեցնել «Տեղական

տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված դրույքաչափերին:

5. **«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին»** ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ նախագծի անվանման մեջ նշել «ՈՐՈՇՈՒՄ» բառը:

6. Նախագծի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) կետերի համարակալումը վերանայման կարիք ունի, մասնավորապես՝ 4-րդ կետը կրկնվում է: Բացի այդ, Հավելվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերն անհրաժեշտ է հանել, քանի որ դրանցով նախատեսվող դրույթները Նախագծի կարգավորման առարկայի մեջ չեն մտնում: Միաժամանակ հայտնում ենք, որ հիշյալ կետերով նախատեսվող վճարների տեսակներն ու դրույքաչափերն արդեն իսկ նախատեսված են **«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին»** ավագանու որոշման նախագծի Հավելված 2-ով:

7.**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»** ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ նախագծի անվանման մեջ նշել «ՈՐՈՇՈՒՄ» բառը:

8. Նախագծի նախաբանում «34-րդ հոդվածով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «33-րդ և 34-րդ հոդվածներով» բառերով: Բացի այդ նախաբանում ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1646-Ն որոշմանը հղում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին դրույթն անհրաժեշտ է նախատեսել առանձին կետի տեսքով: Բացի

այդ «հատվածներում» բառն անհրաժեշտ է փոխարինել «մեջ» բառով և հանել «և լրացումները» բառերը, քանի որ Նախագծով լրացումներ չեն նախատեսվում, այլ կատարվում են միայն փոփոխություններ:

10. Հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված Նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ Նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող Նախագծի հավելվածների տեսքով: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, մասնավորապես՝ Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Այդ առումով հավելվածի դրույթներն անհրաժեշտ է նախատեսել աղյուսակի տեսքով:

11. Նախագծի 3-րդ կետում «պաշտոնական» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «մտնում» բառը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների:

**Իրավական ակտերի փորձաքննության**
**գործակալության պետ՝**

11/25/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

**ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ

| N | ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ Նախագծի անվանման մեջ նշել «ՈՐՈՇՈՒՄ» բառը: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| 2 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 2. Նախագծի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետի 2-րդ ենթակետի գ/ պարբերությունում «հոդվածի 1-ին մասի 1-ին կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կետի 1-ին ենթակետով» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 3. Հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները, որոնց համաձայն ծխախոտային արտադրատեսակներից բացի տեղական տուրք է սահմանվում նաև ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 4. Հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի գ/ պարբերությամբ նախատեսված տեղական տուրքի դրույքաչափին անհրաժեշտ է համապատասխանեցնել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված դրույքաչափերին: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 5. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ Նախագծի անվանման մեջ նշել «ՈՐՈՇՈՒՄ» բառը: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 6. Նախագծի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) կետերի համարակալումը վերանայման կարիք ունի, մասնավորապես՝ 4-րդ կետը կրկնվում է: Բացի այդ, Հավելվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերն անհրաժեշտ է հանել, քանի որ դրանցով նախատեսվող դրույթները Նախագծի կարգավորման առարկայի մեջ չեն մտնում: Միաժամանակ հայտնում ենք, որ հիշյալ կետերով նախատեսվող վճարների տեսակներն ու դրույքաչափերն արդեն իսկ նախատեսված են «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի Հավելված 2-ով: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 7.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ Նախագծի անվանման մեջ նշել «ՈՐՈՇՈՒՄ» բառը: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 8. Նախագծի նախաբանում «34-րդ հոդվածով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «33-րդ և 34-րդ հոդվածներով» բառերով: Բացի այդ նախաբանում ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1646-Ն որոշմանը հղում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին դրույթն անհրաժեշտ է նախատեսել առանձին կետի տեսքով: Բացի այդ «հատվածներում» բառն անհրաժեշտ է փոխարինել «մեջ» բառով և | Կատարվել է համապատասխան ուղղում |

| | | | |
|---|---|---|---|
| | | հանել «և լրացումները» բառերը, քանի որ Նախագծով լրացումներ չեն նախատեսվում, այլ կատարվում են միայն փոփոխություններ: | |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 10. Հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ Նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող Նախագծի հավելվածների տեսքով: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, մասնավորապես՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Այդ առումով հավելվածի դրույթներն անհրաժեշտ է նախատեսել աղյուսակի տեսքով: | Կատարվել է համապատասխան ուղղում |
| | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 11. Նախագծի 3-րդ կետում «պաշտոնական» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «մոնում» բառը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների: | Կատարվել է համապատասխան ուղղում |

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
## 2020 ԹՎԱԿԱՆԻ «ՆՈՅԵՄԲԵՐԻ» «26»-Ի N 26-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2020 թվականի «նոյեմբերի » «26 »-ի . « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 26 -Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով, և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1646-Ն որոշումը՝ հարկավոր է բյուջեի եկամտային մասում պլանավորել 9914.4 հազար ՀՀ դրամի չափով կապիտալ դրամաշնորհ և ծախսային մասում՝ կապիտալ ծախս՝ սուբվենցիոն ծրագրով գազատարի կառուցման աշխատանքների ծախսերը ֆինանսավորելու նպատակով, ինչպես նաև ծախսերի խնայողությունների հաշվին ավելացնել բյուջեից տրվող նպաստների գումարը՝ անապահով ընտանիքներին և հիմնադրամներին աջակցություն ցուցաբերելու նպատակով: Այլ կերպ ասած՝ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Քանի որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշումը կրում է նորմատիվ իրավական բնույթ, ապա «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ